ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 N 40 „ 30 „ Դեկտեմբեր 2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԵՆԹԱԿԱ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՕՊՏԻՄԱԼԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ,,Հայաստանի Հնրապետության մարզերում պետական կառավարման մասին,, ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2016թ. մայիսի 27-ի ,, Ի պատասխան՝ պետական կառավարման ապարատի օպտիմալացման ուսումնասիրություն, իրավիճակի վերլուծություն իրականացնելու և առաջարկություններ ներկայացնելու նպատակով միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելու մասին,, N 01/17.1/1675-16 հանձնարարականի.

Ո ր ո շ ու մ եմ՝

1. Հայաստանի Հանարապետության Վայոց ձորի մարզպետարանի և ենթակա կառույցների օպտիմալացման հնարավորություններն ուսումնասիրելու նպատակով ստեղծել 9 /ինը/ հոգուց բաղկացած խումբ՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքային խմբին՝ օպտիմալացման հնարավորությունները քննարկելիս հաշվի առնել միջազգային փորձը, զբաղեցրած և թափուր հաստիքները, ֆունկցիոնալ հնարավոր կրկնությունները:
   Քննարկումներն ավարտել 2016թ. հունիսի 3-ին, որից հետո ՀՀ տարածքային կառավար-ման և զարգացման նախարարություն ներկայացնել կոնկրետ առաջարկ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի և ենթակա կառույցների օպտիմալացման հնարավորություններն ուսումնասիրող խմբի անհատական կազմ

ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2016թ մայիսի 30-ի N 40 որոշման

1. Թարվերդյան Սամվել - ՀՀ ՎՁ մարզպետի տեղակալ, խմբի ղեկավար
2. Սահակյան Կամո - ՀՀ ՎՁ մարզպետարանի աշխատակազմի ղեկավար, ղեկավարի տեղակալ
3. Ղազարյան Արփիար - ՀՀ ՎՁՄ աշխատակազմի կրթության, մշակույթի և Վարչության պետ, խմբի անդամ
4. Վարդանյան Շահեն - ՀՀ ՎՁՄ աշխատակազմի ֆին. և սոց.տնտ. զարգաց. վարչության պետ, խմբի անդամ
5. Սիմոնյան Նորայր - ՀՀ ՎՁՄ աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ, խմբի անդամ
6. Շահբազյան Սամվել - ՀՀ ՎՁՄ աշխատակազմի առողջ. և սոց. ապահով. վարչության պետի տեղակալ, խմբի անդամ
7. Մաղաքյան Նարինե - ՀՀ ՎՁՄ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ, խմբի անդամ
8. Արտաշեսյան Մարինե - ՀՀ ՎՁՄ աշխատակազմի անձնակազմի կառավար. բաժնի պետ, խմբի անդամ
9. Կարապետյան Հայկ - ՀՀ ՎՁՄ աշխատակազմի քարտուղարության պետի, խմբի քարտուղար

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի
Աշխատակազմի ղեկավար՝ Կ. ՍԱՀԱԿՅԱՆ